Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Ուսումնական սեմինար 2. Հայաստանում ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) գործնական կիրառման վերաբերյալ

Մոնիթորինգ ՌԷԳ գործընթացում

23 - 24 նոյեմբերի 2023 թ.
Հայաստանի Հանրապետություն, Երևան

Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու
ՄԱԿ ԵՏՀ-ի խորհրդատու

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Մոնիթորինգ ՌԷԳ գործընթացում. իրավական պահանջներ

ՌԷԳ-ի վերաբերյալ ԵՄ-ի դիրեկտիվ (2001/42/EC).

1. պլանների և ծրագրերի (Պ/Ծ) իրականացման էական էկոլոգիական հետևանքների մոնիթորինգ
2. իրավիճակի շտկման համապատասխան միջոցառումներ
3. անհրաժեշտության դեպքում մոնիթորինգի առկա մեխանիզմների օգտագործում
4. հետևանքների մեղմացման և մոնիթորինգի միջոցառումները պետք է հանրամատչելի լինեն

ՌԷԳ- վերաբերյալ արձանագրություն (2003թ. ՄԱԿ ԵՏՀ).

1. նույնը, բայց մոնիթորինգն իրականացնել՝ հաշվի առնելով առողջության վրա ազդեցությունները և հետևանքները
2. նույնը
3. նշված չէ
4. նույնը (ՌԷԳ հաշվետվությունում՝ պլանի կամ ծրագրի իրականացման բնապահպանական, այդ թվում՝ բնակչության առողջության հետ կապված հետևանքների մոնիթորինգի միջոցառումներ (Հավելված IV))
5. բացի այդ, և որ ոչ պակաս կարևոր է, մոնիթորինգի արդյունքները պետք է ներկայացվեն բնապահպանական և առողջապահական համապատասխան մարմինների, ինչպես նաև հանրության ուշադրությանը (հոդված 12.2)

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Մոնիթորինգի խնդիրը

- կանխատեսվող և փաստացի հետևանքների համեմատություն, ինչը թույլ է տալիս տեղեկատվություն ստանալ պլանի կամ ծրագրի իրականացման մասին,
- գործնական գիտելիքների ձեռքբերում՝ ապագա գնահատումների բարելավման նպատակով (օրինակ՝ որպես ՌԷԳ որակի վերահսկման գործիք),
- համապատասխան մարմինների բնապահպանական կարգադրագրերի համապատասխանության ստուգում,
- ստուգել, թե արդյոք պլանը կամ ծրագիրն իրականացվում է հաստատված փաստաթղթի համաձայն, ներառյալ անբարենպաստ հետևանքները կանխարգելելու, նվազեցնելու կամ մեղմելու համար նախատեսված միջոցառումները

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

ՌԷԳ արդյունքների վրա հիմնված մոնիթորինգի ծրագիր

- Մոնիթորինգը (հետևանքների դիտարկումը) բավարար չէ Պ/Ծ-ի իրականացման ընթացքում բնապահպանական խնդիրները մշտապես հաշվի առնելու, ինչպես նաև շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա հետևանքների մասին շահագրգիռ կողմերին տեղեկացնելու համար:
- Անհրաժեշտ է ՌԷԳ-ի արդյունքների վրա հիմնված մոնիթորինգի առավել ընդարձակ ծրագիր, ներառյալ.

1. ըստ էության, երկու «ուղղությունների» մոնիթորինգ.
   - Պ/Ծ-ի իրականացման գործընթացում **շրջակա միջավայրի եւ բնակչության առողջության վրա հետեւանքների** մոնիթորինգ**,**
   - ՌԷԳ գործընթացում առաջարկվող՝ **հետեւանքների մեղմացման միջոցառումների** իրականացման գործընթացի մոնիթորինգ,
2. մոնիթորինգի արդյունքների վերլուծություն և դրա արդյունքների հիման վրա միջոցառումների ձեռնարկում («չնախատեսված» անբարենպաստ հետևանքների հայտնաբերման դեպքում),
3. իրազեկում (շահագրգիռ կողմերին մոնիթորինգի արդյունքների մասին տեղեկություններ հասցնելը):

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

ՌԷԳ շրջանակներում մոնիթորինգի սխեմայի կիրառում

Մոնիթորինգի միջոցառումներ պետք է ոչ միայն նախատեսել, այլ նաեւ իրականացնել

ՌԷԳ-ի շրջանակներում մոնիթորինգի գործողությունները և հաշվետվությունները պետք է.

- օպտիմալ կերպով ներառված լինեն Պ/Ծ-ի իրականացման մոնիթորինգի սխեմայի մեջ և/կամ համապատասխանեցվեն դրա պարբերական վերանայումների հետ
- ողջամիտ սահմաններում հիմնված լինեն առկա մոնիթորինգի սխեմաների վրա

Ո՞վ է պատասխանատու դրա համար

- ՌԷԳ-ի վերաբերյալ արձանագրությունը և դիրեկտիվը չեն ենթադրում, թե ով, որտեղ, երբ և ինչպես պետք է իրականացնի ՌԷԳ մոնիթորինգը
- Գործնականում. առանցքային դեր է կատարում Պ/Ծ-ի իրականացման համար պատասխանատու մարմինը

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Ինչպե՞ս մշակել ՌԷԳ մոնիթորինգի սխեման

Մոնիթորինգ → Գնահատում եւ կառավարում → Հաղորդակցություն / հաշվետվողականություն

Մոնիթորինգի սխեմայի մշակումը կախված է կոնկրետ Պ/Ծ-ի ծավալից և բովանդակությունից, ինչպես նաև մոնիթորինգի առկա հնարավորություններից, վարչական մակարդակից և օրենսդրության պահանջներից:

Հաշվի առնել.

- մոնիթորինգի անհրաժեշտ գործողությունները
- մոնիթորինգի իրականացման համար պատասխանատվությունը
- ե՞րբ պետք է իրականացվի մոնիթորինգը (ամսաթիվը և հաճախականությունը)
- ինչպե՞ս պետք է ներկայացվեն արդյունքները և ինչ ձևաչափով

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Մոտեցումներ և օրինակներ (1)

Մոնիթորինգը կապված է ՌԷԳ-ի այնպիսի տարրերի հետ, ինչպիսիք են ելակետային պայմանների վերլուծությունը, հետևանքների գնահատումը և մեղմացման միջոցառումների մշակումը:

ՌԷԳ-ի խնդիրը	Զգալի հետեւանքներ	Առաջարկվող մոնիթորինգային միջոցառումներ
Բուսական եւ կենդանական աշխարհի պահպանություն եւ հնարավորության դեպքում դրա վիճակի բարելավում	Միջմակընթացային (մերձափնյա) կենսամիջավայրերի մշտական կորուստ անշարժ ափապաշտպան կառույցների կառուցման և միջմակընթացային գոտիների կրճատման արդյունքում	Միջմակընթացային կենսամիջավայրերի տարածքի փոփոխության մոնիթորինգ • մոդելավորում՝ ծովի մակարդակի տվյալների հիման վրա (տարեկան) • օդային լուսանկարահանում (առնվազն հինգ տարին մեկ անգամ)
	Միջմակընթացային կենսամիջավայրերի ստեղծում	Երկարաժամկետ մոնիթորինգ՝ • օդային լուսանկարահանման • բուսականության հետազոտությունների • թռչունների հաշվառման • բենթոսային մակրոողնաշարավորների հետազոտության միջոցով
Պատմամշակութային ժառանգության պահպանություն	Հնագիտական հուշարձանները բացելու կամ վնասելու հնարավորություն	Ռազմավարական մակարդակով մոնիթորինգի կարիք չկա: ՇՄԱԳ-ի և կոնկրետ նախագծերի իրականացման ընթացքում կկատարվեն անհրաժեշտ գնահատումներ և հետազոտություններ

Վերցվել է՝ Բնապահպանական գործակալության (2006թ) Համբերի գետաբերանի պաշտպանության ուսումնասիրություն (https://www.gov.uk/government/organisations/environment-agency)

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Մոտեցումներ և օրինակներ (2)

- Մոնիթորինգը հիմնված է բացահայտված էկոլոգիական կամ առողջապահական յուրաքանչյուր խնդրին/ընկալիչին համապատասխանեցված ցուցիչների կիրառման վրա:

- **Ցուցիչը** դա տեղեկատվության մի մասն է՝ նպատակի/փոփոխականի (տնտեսական, սոցիալական կամ էկոլոգիական) առաջընթացը կամ ձեռքբերումը չափելու համար

Օրինակ՝ **SMART** ցուցիչները.

Ցուցիչը պետք է լինի կոնկրետ, չափելի, հասանելի, ծախսարդյունավետ, ծրագրին վերաբերելի և ժամանակին հասանելի:

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Մոտեցումներ և օրինակներ(3)

Մոնիթորինգային ծրագիր Անգլիայի Միդլենդս շրջանի թափոնների կառավարման պլանի ՌԷԳ-ի շրջանակներում

Շրջ. միջավ. ընկալիչ	Ցուցիչ	Աղբյուր
Կենսաբազմազանություն, բուսական և կենդանական աշխարհ	–Նոր օբյեկտների՝ պահպանվող տարածքներին մոտ գտնվելը –Թափոնների կառավարման օբյեկտների ազդեցության հետևանքով խախտված պահպանվող կենսամիջավայրի տարածքի մակերեսը և տոկոսային մասնաբաժինը	– Օբյեկտի ԲԱՀ/ՏԲՀ/ ՇՄԺՊՏԻՎ – Օբյեկտի ԲԱՀ / հակառակ դեպքում կարող է բացակայել
Հող / հողօգտագործում	–Փակ և գործող թափոնների կառավարման օբյեկտների զբաղեցրած հողերի տարածքը (ընդհանուր մակերեսը և չյուրացված հողերի մակերեսը) –Նոր օբյեկտների գտնվելու վայրը –Թափոնների կառավարման գործունեության արդյունքում աղտոտված հողերի տարածքի մակերեսը –Հողօգտագործման կարիքների համար վերականգնված աղտոտված հողատարածքների մակերեսը	– ՏԲՀ / տեղական մարմիններ – ՏԲՀ – Տեղական մարմիններ – Տեղական մարմիններ
Օդ	–Լիցենզիայով նախատեսված փոշու արտանետումների և աղմուկի թույլատրելի սահմանաչափերի գերազանցումների թիվը –Աղբի հավաքման և հեռացման ծառայություններից օգտվող տնային տնտեսությունների թիվը –Հավաքվող և հեռացվող թափոնների մեջ չներառված թափոնների հաշվարկային քանակը (տ) –Թափոնների կառավարման օբյեկտներից ստացվող էներգիայի քանակը	– ՏԲՀ – Տեղական մարմիններ / ՏԲՀ
Կլիմայական գործոններ	–Օբյեկտներից աղբավայրային գազերի (CO_2 և մեթան) տարեկան արտանետումների հաշվարկային քանակը –Վերամշակման, աղբավայրում թաղման կամ ջերմային մշակման ուղարկվող թափոնների քանակը (տ)	– ՏԲՀ / տեղական մարմիններ – Տեղական մարմիններ / տարեկան հաշվետվություն

ԲԱՀ՝ բնապահպանական ազդեցությունների մասին հայտարարություն, ՏԲՀ՝ տարեկան բնապահպանական հաշվետվություն, ՇՄԺՊՏԻՎ՝ Շրջակա միջավայրի, ժառանգության պահպանման և ինքնակառավարման մարմինների հետ հարցերի վարչություն

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Գործնական խորհուրդներ (1)

Մոնիթորինգի ծրագրի մշակման եւ իրականացման փուլերը	ՄԻ՛ ՄՈՌԱՑԵՔ
ՌԷԳ-ի շրջանակի սահմանում և հետևանքների վերլուծություն	• Հաշվի առնել շրջակա միջավայրի և կայուն զարգացման ոլորտում պլանով կամ ծրագրում նախատեսված կամ դրանց հետ կապված խնդիրները, նպատակները և ցուցանիշները • Մոնիթորինգի ծրագրի մշակման ընթացքում ակտիվորեն համագործակցել Պ/Ծ-ի մշակողների խմբի կամ մշակման նախաձեռնողի և համապատասխան բնապահպանական մարմինների հետ
Մոնիթորինգ	• Ցուցանիշները պետք է հարմար լինեն չափման և վերլուծության համար (օրինակ՝ համապատասխանեն SMART-ի* չափանիշներին) • Նախընտրելի է օգտագործել գոյություն ունեցող ցուցանիշները, որոնց մոնիթորինգն արդեն իրականացվում է, մինչդեռ նոր ցուցանիշների ներդրման վերաբերյալ առաջարկությունները կարող են արդարացված լինել միայն հազվադեպ դեպքերում (և պահանջում են բովանդակալից քննարկում բնապահպանական համապատասխան մարմինների հետ) • Մոնիթորինգի արդյունքում ստացվող տեղեկատվությունը պետք է արձանագրվի և պահվի այլ գործակալությունների կամ պետական մարմինների կողմից օգտագործվող ձևաչափով • Ծրագրում ներառել նախատեսվող ազդեցությունների մեղմացման միջոցառումների իրականացման մոնիթորինգը • Ծրագիրը մշակելիս հաշվի առնել ՌԷԳ առաջարկությունները • Պ/Ծ նախաձեռնողի հետ քննարկել մոնիթորինգի և գնահատման առաջարկվող մեթոդները և դրանց իրագործելիությունը ռեսուրսների առկայության տեսանկյունից

BETTER POLICIES FOR BETTER LIVES · environment programme · IBRD • IDA | WORLD BANK GROUP

* Տե՛ս Գյուղական զարգացման ծրագրերի գնահատման եվրոպական ցանցի նյութերը (https://enrd.ec.europa.eu/evaluation/faq/indicators_en).

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Գործնական խորհուրդներ(2)

Մոնիթորինգի ծրագրի մշակման եւ իրականացման փուլերը	**ՄԻ՛ ՄՈՌԱՑԵՔ**
Գնահատում	• Գնահատման ընթացակարգերը համապատասխանեցնել Պ/Ծ-ի պարբերական վերանայումների հետ • Հնարավորության դեպքում կիրառել պարզ մեթոդներ
Գործընթացի կազմակերպում	• ՌԷԳ-ի արդյունքների հիման վրա առաջարկվող գործողությունները համապատասխանեցնել Պ/Ծ-ի իրականացման մոնիթորինգի ընդհանուր ծրագրի հետ՝ ապահովելով դրանց ներառումը պլանավորման և իրականացման ընդհանուր ցիկլում • Մոնիթորինգի ընթացքում չնախատեսված բացասական ազդեցությունների հայտնաբերման դեպքում նախատեսել արձագանքման միջոցներ ձեռնարկելու հնարավորություն • Ապահովել մոնիթորինգի և գնահատման գործընթացների, ինչպես նաև դրանց կառավարման իրագործելիությունն ու տնտեսական արդյունավետությունը
Տեղեկատվության փոխանակում	• Նախատեսել ՌԷԳ-ի արդյունքների հիման վրա Պ/Ծ-ի իրականացման ընթացքի և գործողությունների ծրագրի վերաբերյալ համապատասխան մարմիններից և հանրությունից տեղեկատվություն ստանալու հնարավորություն • Նկարագրել, թե ինչպես են օգտագործվելու կամ պետք է օգտագործվեն մոնիթորինգի արդյունքները Պ/Ծ-ի նախաձեռնողի կողմից • Իմանալ Պ/Ծ-ի և ՌԷԳ-ի արդյունքների հիման վրա գործողությունների ծրագրի մշակման և իրականացման գործընթացում բաց հարցերի, անորոշության գործոնների և դժվարությունների առկայության մասին • Խուսափել հատուկ տերմիններով ծանրաբեռնված ձևակերպումներից

Funded by
the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Շնորհակալություն ուշադրության համար

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP